# ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԱՉԱՓ

**Ուսուցիչ ______________________ Ամսաթիվ ________________________**

| Առարկան – Ես և շրջակա աշխարհը | | |
|---|---|---|
| Դասարանը -II | Ուստարի -2020թ | Կիսամյակը - I |
| **Թեման** | **Կենդանի և անկենդան բնություն** | |
| Դասի նպատակը | • Օգնել տարբերակել կենդանի և անկենդան բնության, մարդու և բնության ստեղծած օբյեկտները՝ նկարագրելով դրանց առանձնահատկությունները:<br>• Օգնել բացահայտել, որ կենդանի բնությունը կարիք ունի ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի՝ կատարելով դիտարկումներ և փորձեր: | |
| Վերջնարդյունքները | **2Շ-Բ-Բ-Օ1** Նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր:<br>**2Շ-Բ-Բ-Օ1** Համեմատել և տարբերակել շրջապատի օբյեկտները՝ մարդու և բնության կողմից ստեղծված:<br>**2Շ-Բ-Բ-Օ1** Ներկայացնել, թե մարդը ինչ է ստանում բնությունից (սնունդ, շինանյութ, դեղաբույսեր, գեղագիտական նշանակություն):<br>**2Շ-Բ-Բ-Օ1** Նկարագրել բնության անկենդան և կենդանի օբյեկտները, կարողանալ տարբերակել դրանք՝ ելնելով նրանց առանձնահատկություններից:<br>**2Շ-Բ-Բ-Օ2** Դիտարկել և փորձերի օգնությամբ համոզվել, որ կենդանի բնությունը կարիք ունի ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի: | |
| Ընդհանրական խաչվող հասկացությունները | • **Օրինաչափություններ**<br>Տարբերակել կենդանի և անկենդան օբյեկտները ըստ որոշ դիտարկելի որակների և բնութագրիչների, դասակարգել դրանք ըստ այդ բնութագրերի, օրինակ՝ կենդանի օբյեկտները ծնվում են, սնվում են, աճում են, բազմանում են, մահանում են…<br>• **Պատճառ և հետևանք**<br>Այս դասի ընթացքում պետք է գտնել այն պատճառները, որոնց օգնությամբ ծնվում, աճում, զարգանում են կենդանի բնության տարրերը,կամ ինչի հետևանքում են առաջանում անկենդան բնության տարրերը:<br>• **Էներգիա և նյութ**<br>Պարզ սննդային շղթաների միջոցով տարրական պատկերացում տալ կենդանի և անկենդան բնության կապի մասին:<br>• **Կայունություն և փոփոխություն**<br>Դիտարկել, ցույց տալ տարվա եղանակներին կենդանի բնության տարրերի հետ կատարվող փոփոխությունները: | |
| Միջառարկայական կապերը | **Մայրենի**<br>• Կարողանալ պատմել տեսածի մասին, կատարել հիմնավորումներ՝ օգտագործելով բնության մեջ տեսածը, համեմատելիս, վերլուծելիս ճիշտ և տեղին օգտագործել համապատասխան բնորոշիչները, կարողանալ | |

| | |
|---|---|
| | բնության վերաբերյալ կարդացած ստեղծագործություններից ունեցած տեղեկություններն օգտագործել բնության մասին դիտարկումներում, գուշակել հանելուկներ, ինքնուրույն հորինել փոքրիկ ոտանավորներ, աքրոստիկոսներ:<br>• **Մաթեմատիկա**<br>Կարողանալ կազմել աղյուսակներ՝ տեսած, ուսումնասիրած տվյալները գրառելով դրանց մեջ, կամ կարդալ աղյուսակներ, դուրս գրել տվյալներ, կազմել խնդիրներ:<br>**Արվեստ**<br>• Բնության մասին գեղարվեստական նյութերի, դերախաղով ընթերցումների, ներկայացումների, թեմային համապատասխան ֆիլմերի, արվեստի այլ աշխատանքների ուսումնասիրությունների (երաժշտության, բանաստեղծությունների ունկնդրումներ, նկարների դիտում ) միջոցով ամբողջացնել բնության մասին պատկերացումները՝ որպես արվեստի ստեղծման ներշնչման աղբյուր, ինքնուրույն ստեղծագործել՝ նկարել բնություն, երգեր երգել բնության մասին, կամ ստեղծագործել և այլն:<br>**Ֆիզկուլտուրա**<br>• Կատարել շարժական խաղեր, խորացնել կենդանի և անկենդան բնության տարրերի ճանաչողությունը բնության գրկում փոքրիկ արշավներ միջոցով, որոնց ժամանակ կսովորեն և կցուցաբերեն անվտանգ, ապահով և հոգատար վարք բնության և այլ կենդանի էակների հանդեպ:<br>**Տեխնոլոգիա**<br>• Ծեփել, բնական կամ արհեստական նյութերով պատրաստել կենդանի կամ անկենդան բնությանը վերաբերող առարկաներ:<br>**Օտար լեզու**<br>• Սովորել փոքրիկ ոտանավորներ, կարդալ և թարգմանել փոքրիկ տեքստեր: |
| Անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ | Դասագիրք՝ «Ես և շրջակա աշխարհը» աշխատանքային տետր, խաղ՝ LearningApps.org<br>https://learningapps.org/display?v=p7fqjc6ga20<br>https://learningapps.org/display?v=prqzqbwq320<br>(հղումները բացելու համար սեղմել՝ctrl +click)<br>պաստառ՝«Կենդանի և անկենդան բնություն», բույսերի, մրգերի մուլյաժներ, համակարգիչ, տեսացրիչ |
| Գնահատում | Թեստային աշխատանքի միջոց<br>Կարելի է առաջադրել նաև գնահատման հետևյալ ձևերը՝<br>https://padlet.com/nanikantonyan/v8g0ftjgafbf18jw<br>https://docs.google.com/forms/d/1Mh4nmrbk8OxU29u7p6d_YMBRm0m1v5EIKg2LjI2Opel/edit |
| Տնային աշխատանք | Տնային աշխատանք պետք է հանձնարարել այնպիսի վարժություններ, որոնք կնպաստեն թեմայի յուրացմանը, ամրապնդմանը: |

## Դասի ընթացքը

<table>
<tr><th>Դասի փուլերը</th><th>Փուլի խնդիրները</th><th>Ուսուցչի գործողությունները</th><th>Աշակերտի գործողությունները</th></tr>
<tr><td>Կազմակերպչական մաս /1-2 րոպե/</td><td>Նախապատրաստվել դասին</td><td>Աշակերտների և ուսուցչի փոխադարձ ողջույն, բացակաների ամրագրում:</td><td>Աշակերտները նույնպես պատրաստվում են և պատասխանում են հարցերին:</td></tr>
<tr><td>Խթանման փուլ</td><td>Աշակերտների հետա-քրքրությունը խթանե-լու համար  կարդալ հա նելուկ,որոնց պատասխանները աշակերտները կարող են նկարել</td><td>Մտագրոհով փորձում է պարզել , թե ինչ գիտեն աշակերտները թեմայի վերաբերյալ:</td><td>Մասնակցում են մտագրոհին,հետո մեկնաբանում, վերլուծում ասածները</td></tr>
<tr><td>Իմաստի ընկալման փուլ</td><td>Նոր նյութի հաղորդում<br>Նոր նյութի ընկալում</td><td>Բացատրում է նոր դասը, բերում օրինակ<br>ներ , ցուցադրում և բացատրում պաստա-<br>ռի վրա:<br>Դասարանը բաժանում է խմբերի և հանձնարում կատարել խմբային աշխատանք հետևյալ բովանդակու-<br>թյամբ՝<br>Խումբ I տրվում է բառերի խումբ և առաջարկվում դասակարգել աղյուսա-<br>կում՝,,արջ, կապիկ, ուրց, սունկ, աղ , քար, սիգ, ջայլամ, մուր, որոր, լուսին<br><table><tr><td>Կենդանի բնություն</td><td>Անկենդան բնություն</td><td></td></tr><tr><td></td><td></td><td></td></tr><tr><td></td><td></td><td></td></tr><tr><td></td><td></td><td></td></tr></table><br>Խումբ II<br>Որ հատկանիշներն են բնորոշ կենդանի բնությանը:<br>ա/ծնվում են<br>բ/բազմանում են<br>գ/ անփափոխ են<br>դ/ չեն շնչում<br>ե/ աճում են<br>զ/ չեն սնվում<br>է/մահանում են</td><td>Աշակերտները լսում են ,պատասխանում ուղղորդող հարցերի, կատարում եզրահան գումներ, դատողու-<br>թյուններ:<br>Բաժանվում են խմբե-<br>րի, կատարում են խմբային աշխատանք<br>ները :Կարդում , ներկայացնում իրենց խմբում կատարած աշխատանքը</td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | | **Խումբ III**<br>Խմբավորի՛ր բառերը և գրի՛ր<br>Ագռավ, քար, արջ, ջուր, ծաղիկ, լուսին, ամպ, ձուկ, սունկ, հող, անձրև:<br>Կենդանի բնություն<br>___________________<br>___________________<br>Անկենդան բնություն<br>_____________________<br>____________________<br>________________________ | |
| Կշռադատ-ման փուլ | Թեմայի յուրա ցում , ամրա-պնդում | Խաղային վարժություններով ստուգում է թեմայի յուրացու-մը, տրամադրում խաղերի հղումները:<br>https://learningapps.org/display?v=p7fqjc6ga20<br>https://learningapps.org/display?v=prqzqbwq320 | Աշակերտները մտնում են համապատասխան հղմամբ և կատարում առաջադրանքները:<br>Հղում1<br>Հղում2 |
| Անդրադարձ | Անդրադարձ դասի բոլոր փուլերով: | Անդրադարձ է կատարում դասի բոլոր փուլերին՝ զար-գացնելով հիշողությունը, ուշադրությունը: | Մեկ անգամ ևս անցնում են դասի բոլոր փուլերով, հիշում , ամրապնդում: |
| Գնահատում | Թեստային աշխատանք | Կարելի է այն կազմակերպել և google.doc-ով և padlet գործիքների միջոցով | Կատարում են առաջադրանք-ները և հանձնում: |

/Կցված է թեմատիկ գրավոր աշխատանքի  նմուշ/

**Թեմատիկ գրավոր աշխատանք**[1]

Թեմա 3- Բնությունն իմ շուրջը
Ենթաթեմա- Կենդանի և անկենդան բնություն

Տարբերակ 1

1. Ո՞րն է կենդանի բնություն :
   ա/ գետ   բ/ արծիվ   գ/ արև
2. Ո՞րն է անկենդանի բնություն :
   ա/ սկյուռ   բ/ մարդ   գ/ սար
3. Ո՞ր հատկանիշներն են վերաբերում կենդանի բնությանը:
   ա/ ծնվում են   բ/ բազմանում են
   գ/ անփոփոխ են   դ/ չեն շնչում
   ե/ աճում են   է/ մահանում են
4. Խմբավորի՛ր բառերը և գրի՛ր առանձին սյունակներում :
   Ագռավ, քար,արջ, ջուր, ծաղիկ, լուսին, ամպ, ձուկ, սունկ, հող, անձրև, մարդ, սար :

| Կենդանի բնություն | Անկենդան բնություն |
| --- | --- |
| ______________________________ | ________________________________ |
| ______________________________ | ________________________________ |
| ______________________________ | ________________________________ |

5.Ինչի՞ համար են բույսերն օգտագործում արևի էներգիան :
ա/ սնունդ պատրաստելու համար
բ/ սերմեր ցրելու համար
գ/ հողը պարարտոցնելու համար

6.Որոշ բույսեր պտուղ են տալիս, ինչպես, օրինակ խնձորը :
Ո՞րն է պտղի դերը բույսի կյանքում :
ա/ Այն պաշտպանում է սերմերը :
բ/ Այն գրավում է միջատներին :
գ/ այն նրա համար է , որ մարդիկ ուտեն :

7. Ինչի՞ համար են բույսի սերմերը :
ա/ նոր բույսեր առաջացնելու
բ/ բույսի համար սնունդ ապահովելու
գ/ բույսի համար ջուր խնայելու

[1] Լ.Ալեքսանյան - «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գնահատումը
Թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ հարցաշարերի շտեմարան

8. Նկարից օգտվելով՝ գրի՛ր բույսերի մասերի անունները :

1 ____________

2 ____________

3 ____________

4 ____________

5 ____________




9. Ի՞նչ է անհրաժեշտ բույսերի աճման համար: Ընդգծի՛ր:

անձրև





Արև



կայծակ



քար



հող



լուսին